



COVID-19-ի դեմ Պատվաստում Ինչ Պետք Է Իմանալ Ծնողները



ԱՆՎՃԱՐ

ԱՐԴՅՈ՞Ք ԻՄ ԵՐԵՆԱՆ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՎԱՍՏԿԵԼ COVID-19-Ի ԴԵՄ

12 տարեկան և բարձր տարիքի երեխաները կարող են պատվաստվել Pfizer պատվաստանյութով:

- Պատվաստանյութերն **անվճար են** բոլորի համար:
- Ձեզվից չի պահանջվում ունենալ ապահովագրություն:
- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:
- Կարող են պատվաստվել բոլորը, ներառյալ այլերգիաներ ունեցող շատ մարդիկ:



ԱՐԴՅՈ՞Ք ԵՄ ԻՄ ԵՐԵՆԱՅԻՆ ՊԵՏՔ Է ՊԱՏՎԱՍՏԵՄ COVID-19-Ի ԴԵՄ:

- Այո՛: COVID-19-ի դեմ պատվաստանյութերն **անվտանգ են և արդյունավետ:**
- COVID-19 վիրուսը հաճախ մեղմ է դրսևորվում երեխաների մոտ, սակայն որոշ երեխաներ կարող են լուրջ հիվանդանալ կամ ունենալ տևական առողջական խնդիրներ:
- Երեխաները կարող են տարածել վիրուսը ուրիշներին: Օգնեք պաշտպանել ձեր ընտանիքը՝ պատվաստվելով և պատվաստելով ձեր երեխաներին:



ՈՐՏԵ՞Ղ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՎԱՍՏԵԼ ԻՄ ԵՐԵՆԱՅԻՆ

Չարցրեք ձեր երեխայի բժշկին, տեղամասային դեղատանը կամ այցելեք **VaccinateLACounty.com**՝ գտնելու ձեզ մոտիկ պատվաստման վայր: Փնտրեք պատվաստման կլինիկա (pop-up vaccine clinics) ձեր երեխայի դպրոցում:

Շատ վայրերում **Անհրաժեշտ ՉԷ Նախնական Ժամադրություն**

Չանգահարեք Չանրային Առողջապահության Վարչության Չանգերի Կենտրոն **833-540-0473** հեռախոսահամարով, եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն պատվաստանյութ գտնելու, դեպի պատվաստման վայր փոխադրման, կամ տունը լքել չկարողացող երեխային տանը պատվաստելու համար: Կենտրոնը գործում է ամեն օր, առավոտյան 8-ից մինչև երեկոյան 8:30:

Տեղեկությունները հասանելի են բազմաթիվ լեզուներով 24/7՝ զանգահարելով 2-1-1 հեռախոսահամարով:

ՈՐՈ՞ՆԵ ԵՆ ԿՈՂՄԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Երեխաները ստանում են պատվաստանյութի նույն չափաբաժինը, և նրանց մոտ դրսևորվում են նույն կողմնակի ազդեցությունները, ինչ մեծահասակների մոտ:
- Կողմնակի ազդեցությունները կարող են ներառել ձեռքի ցավ կամ կարմրություն, հոգնածության զգացողություն, ջերմություն, դող, գլխացավ կամ մկանային ցավ: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում կողմնակի ազդեցություններ:
- Կողմնակի ազդեցությունները տարածված երևույթներ են, և նշանակում են, որ ձեր երեխայի իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն:**
- Կողմնակի ազդեցությունները կարող են ազդել ձեր երեխայի առօրյա որոշ գործողությունների վրա, սակայն պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում:





COVID-19-ի դեմ Պատվաստում Ինչ Պետք Է Իմանան Ծնողները

ԱՐԴՐՔ COVID-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- Ձեր երեխան չի կարող վարակվել COVID-19-ով պատվաստանյութից: Պատվաստանյութերից որևէ մեկը չի պարունակում COVID-19-ը առաջացնող վիրուս:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց վրա, ներառյալ՝ տարբեր տարիքի, ուրիշ մաշկի գույն ունեցող և առողջական խնդիրներ ունեցող անձանց, և պարզվել է, որ պատվաստանյութերն անվտանգ են:
- Իրականացվել է յուրաքանչյուր պահանջվող քայլ՝ ապահովելու պատվաստանյութի **անվտանգ և արդյունավետ** լինելը:
- Pfizer կամ Moderna պատվաստանյութով պատվաստվելուց հետո փոքրաթիվ անձանց՝ հիմնականում դեռահասների և երիտասարդների մոտ, առաջացել է սրտի բորբոքում (միոկարդիտ՝ սրտամկանի, և պերիկարդիտ՝ սրտապարկի բորբոքում): Սա տեղի է ունենում չափազանց հազվադեպ: Նրանցից շատերի մոտ այն դրսևորվել է մեղմ, և նրանք դրական են արձագանքել բուժմանը և հանգստին: Միոկարդիտը և պերիկարդիտը ավելի հաճախ հանդիպում են այն մարդկանց մոտ, որոնք վարակվում են COVID-19-ով, և COVID-19-ի վարակի դեպքում սրտի համար վտանգները կարող են ավելի ծանր լինել: **Պատվաստման առավելությունները գերազանցում են վտանգները:**
- Չկա ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութը ազդում է դեռահասի զարգացման կամ ապագայում պտղաբերության վրա:
- Եթե ունեք հարցեր կամ մտահոգություններ, զրուցեք ձեր երեխայի բժշկի հետ:



ՆԱԽՔԱՆ ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ՊԱՏՎԱՍԿԵԼԸ

- Խոսեք ձեր երեխայի հետ պատվաստման, դրա հնարավոր կողմնակի ազդեցությունների և այն մասին, թե ինչ կարելի է ակնկալել պատվաստման ժամանակ:
- Համոզվեք, որ պատվաստման վայրը առաջարկում է Pfizer պատվաստանյութ:
- Ստուգեք՝ իմանալու, թե ինչպես է տրվում **ծնողի համաձայնությունը**:
- Պատվաստեք ձեր երեխային միաժամանակ այլ պատվաստանյութերով: COVID-19-ի դեմ պատվաստումը կարելի է կատարել մյուս սովորական պատվաստումներին զուգահեռ:

ՊԱՏՎԱՍԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ

- Ձեր երեխան **ամբողջովին պատվաստված է** Pfizer պատվաստանյութի 2րդ դեղաչափը ստանալուց 2 շաբաթ անց: Մարմնից ժամանակ է պահանջվում իմունիտետ ստեղծելու համար:
- Ամբողջովին պատվաստվելուց հետո ձեր երեխան պաշտպանված կլինի ընկերներին այցելելիս, սպորտով զբաղվելիս, ճանապարհորդելիս՝ տեսնելու իր ընտանիքին, և դպրոց վերադառնալիս:
- Եթե ձեր երեխան ամբողջովին պատվաստված է, ապա նրանից չի պահանջվում կարանտին պահպանել, եթե նրա ընկերը, ընտանիքի անդամը, ուսուցիչը կամ թիմակիցը վարակվում է COVID-19-ով:

